

Լառ Տգի



ԴԱՌ ԴԵ ՏԶԻՆ



老子 道德经

老子 道德经

Դան Դե Յզին

Լան Յզի

Թարգմանիչ՝ Լիլիթ Մկրտչյան

Երևան, 2026 թ.

NovusLiber

Yerevan, 2026

ՀՏԴ 1(091)(510)
ԳՄԴ 87.3(5Զ)
L 209

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan

Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9381-3-4 (էլ. հրատ.)

ISBN 978-9939-9381-2-7 (տպագիր)

ISBN 978-9939-9381-2-7



老子 道德经

Դաո Դե Ցզի

Լաո Ցզի

«Դաո Դե Ցզի»-ը («Բնական Ուղու Ուսմունքը») մ.թ.ա. VI-V դդ. գրված չինական փիլիսոփայական մտքի հիմնարար աշխատություն է և համաշխարհային հոգևոր ու մտավոր ժառանգության ամենաազդեցիկ գրքերից մեկը: Ավանդաբար այն վերագրվում է փիլիսոփա Լաո Ցզիին: Ստեղծագործությունը կազմված է 81 կարճ տաղերից և ձևավորել է դաոսական մտածողության հիմքերը՝ դարեր շարունակ ազդելով Արևելքի քաղաքական, բարոյական և փիլիսոփայական աշխարհայացքի վրա:

Գիրքը ներկայացնում է «Դաո»-ի՝ Տիեզերքի բնական և հոգևոր սկզբունքի գաղափարը և այդ սկզբունքին համահունչ ապրելու և գործելու արվեստը: Աֆորիստիկ և խորհրդանշական լեզվով շարադրված տեքստը անդրադառնում է իշխանության, մարդու ներքին հավասարակշռության, խոնարհության, ինքնաճանաչման և բնական ներդաշնակության թեմաներին:

Սույն հրատարակությունը ներկայացնում է ստեղծագործության հայերեն թարգմանության նոր խմբագրում՝ չինարեն բնագրի և այլ լեզուներով հրատարակված թարգմանությունների համեմատական ուսումնասիրությամբ: Թարգմանիչը ձգտել է հնարավորինս պահպանել բնագրի մտքի խտությունն ու պոետիկ կառուցվածքը՝ միաժամանակ ապահովելով հայերեն ընթերցման բնական և գրական հնչողությունը:

Գիրքը նախատեսված է փիլիսոփայությամբ, հոգևոր մշակույթով, Արևելյան մտածողությամբ և դաոսական իմաստասիրական գրականությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

ԽՆԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄ

Սույն հրատարակության թարգմանությունը կատարվել է մեծ ուշադրությամբ և խնամքով՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի իմաստին, կառուցվածքին և գաղափարական ընթացքին՝ միաժամանակ պահպանելով հայերենի բնական հնչողությունն ու գրական արժանապատվությունը:

Տերմինաբանական և ոճական լուծումները ընտրվել են գիտակցաբար՝ հաշվի առնելով թե՛ բնագրի ներքին տրամաբանությունը, թե՛ հայերեն գրական ավանդույթը:

Թարգմանության նպատակն է եղել ստեղծել այնպիսի տեքստ, որը հայերենում կընթերցվի բնական և ամբողջական՝ առանց արհեստական «թարգմանվածության» զգացողության:

Միևնույն ժամանակ, ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն կրում է թարգմանչի լեզվական մտածողության և մեկնողական ընտրությունների հետքը: Այդ պատճառով «Novus Liber» հրատարակչությունը այս աշխատանքը դիտում է որպես հեղինակային թարգմանություն՝ իրականացված լեզվական և մեկնողական ինքնուրույն մոտեցմամբ:

Ընթերցողներին և հետազոտողներին առաջարկվում է այն դիտարկել որպես թարգմանության հնարավոր տարբերակներից մեկը՝ բաց համեմատության, քննարկման և մեկնությունների համար:

Գրական լեզուն կենդանի համակարգ է, և որևէ հրատարակություն չի կարող հավակնել բացարձակ կատարելության:

Եթե ուշադիր ընթերցողները նկատեն տառասխալներ կամ տեխնիկական վրիպումներ, հրատարակչությունը միայն երախտագիտությամբ կընդունի դրանց վերաբերյալ տեղեկությունները՝ info@novusliber.com հասցեով:

Թարգմանչի նախաբանը

«Դառ Դե Յզին»-ի թարգմանությունը իմ թարգմանչական գործունեության ամենահամարձակ նախաձեռնություններից մեկն է: Թեև այն կատարվել է մոտ քսանհինգ տարվա ընթացքում, մինչև օրս դեռ կասկածում եմ իմ թարգմանության ամբողջականությանը՝ գիտակցելով պատասխանատվությունը, որ պահանջվում է նման բազմաշերտ և խորիմաստ տեքստ թարգմանելու համար:

Այս թարգմանությունը կատարվել է «Դառ Դե Յզին»-ի ավանդական տեքստի հիման վրա՝ հիմնականում հետևելով Վան Բիի (226–249 թթ.) դասական մեկնաբանությանը, որը համարվում է աշխատության առավել հեղինակավոր և ազդեցիկ մեկնաբանական ավանդույթներից մեկը:

Դրանից բացի կարդացել եմ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն թարգմանությունները, որոնք կարողացել եմ գտնել, մասնավորապես՝ անգլերեն՝ James Legge, D. C. Lau, Robert G. Henricks, ֆրանսերեն՝ Stanislas Julien, Jean-François Billeter, ռուսերեն՝ Алексей Маслов, Виктор Малявин:

Այս թարգմանությունը մեկանգամյա աշխատանքի արդյունք չէ: Տեքստը ձևավորվել է բազմափուլ խմբագրական գործընթացով՝ տարիների ընթացքում կատարված վերանայումների, լեզվական հղկումների և իմաստային ճշգրտումների միջոցով:

Ինչպես ցանկացած թարգմանություն, այս գործը նույնպես կրում է թարգմանչի լեզվական զգացողության և մտածողության բնական ազդեցությունը: «Դառ Դե Յզին»-ը այն գրքերից է, որոնք չեն ենթարկվում միանշանակ մեկնաբանության և չեն բացվում մեկ ընթերցմամբ:

Յուրաքանչյուր Տաղ պահանջում է ներքին լուրջություն, համբերություն և իմաստի աստիճանական բացումն ընդունելու պատրաստակամություն, և գրեթե երբեք պատրաստ պատասխաններ չի տալիս, այլ բացում է միայն նոր հարցերի շարք:

Սա այն յուրահատուկ գրքերից է, որն իր պարզության մեջ ասես խտացրել է մարդկային ամենակարևոր իմաստությունները: Ամեն հաջորդ անգամ կարդալուց մտածում եմ, պետք է սա դնեմ սեղանիս ու ամեն օր գոնե մեկ անգամ նորից կարդամ: Դառն ասում է. Այո՛, կարդա, բայց հետո մոռացի՛ր ու գնա՛ ապրիր քո կյանքով, մինչև մի օր նորից կարդաս, եթե այդպես ստացվի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տաղ 1.....	1
Տաղ 2.....	2
Տաղ 3.....	4
Տաղ 4.....	5
Տաղ 5.....	6
Տաղ 6.....	7
Տաղ 7.....	8
Տաղ 8.....	9
Տաղ 9.....	10
Տաղ 10	11
Տաղ 11	13
Տաղ 12	14
Տաղ 13	15
Տաղ 14	17
Տաղ 15	19
Տաղ 16	21
Տաղ 17	23
Տաղ 18	24
Տաղ 19	25
Տաղ 20	26
Տաղ 21	28
Տաղ 22	29
Տաղ 23	30
Տաղ 24	31
Տաղ 25	32
Տաղ 26	34
Տաղ 27	35
Տաղ 28	37
Տաղ 29	39

Sւոյ 30	40
Sւոյ 31	41
Sւոյ 32	43
Sւոյ 33	44
Sւոյ 34	45
Sւոյ 35	46
Sւոյ 36	47
Sւոյ 37	48
Sւոյ 38	49
Sւոյ 39	51
Sւոյ 40	53
Sւոյ 41	54
Sւոյ 42	56
Sւոյ 43	57
Sւոյ 44	58
Sւոյ 45	59
Sւոյ 46	60
Sւոյ 47	61
Sւոյ 48	62
Sւոյ 49	63
Sւոյ 50	64
Sւոյ 51	65
Sւոյ 52	67
Sւոյ 53	69
Sւոյ 54	70
Sւոյ 55	72
Sւոյ 56	74
Sւոյ 57	75
Sւոյ 58	77
Sւոյ 59	78
Sւոյ 60	79
Sւոյ 61	80
Sւոյ 62	82

Sւղ 63	84
Sւղ 64	85
Sւղ 65	87
Sւղ 66	88
Sւղ 67	89
Sւղ 68	90
Sւղ 69	91
Sւղ 70	92
Sւղ 71	93
Sւղ 72	94
Sւղ 73	95
Sւղ 74	96
Sւղ 75	97
Sւղ 76	98
Sւղ 77	99
Sւղ 78	100
Sւղ 79	101
Sւղ 80	102
Sւղ 81	103

Տաղ 1

Ուղին, որի մասին կարելի է խոսել, հավերժ ու անփոփոխ չէ:

Անունը, որը կարելի է բառերով ասել, հավերժ ու անփոփոխ չէ:

Անանուն է երկնքի ու երկրի սկզբնաղբյուրը:

Անունը բոլոր գոյերի մայրն է:

Ուղու խորհուրդն ընկալելու համար պետք է ազատվել ցանկություններից, բայց եթե ցանկություններդ միշտ քեզ հետ են, կտեսնես միայն Ուղու արտաքին դրսևորումը:

Երկուսն էլ նույն ճշմարիտ Ուղու ընկալումներն են, որոնք ասես տարբեր կողմերից են պատկերում այն, և տարբեր անուններ ունեն: Միասին դրանք դառնում են խորհրդավոր հայտնություն:

Այդ հայտնության մեջ են գերագույն և հիասքանչ ընկալման դարպասները:

Տաղ 2

Ընկալելով գեղեցկությունը, մարդիկ սկսում են տեսնել տգեղը, ընկալելով իմաստությունը, սկսում են հասկանալ իմաստության պակասը:

Ուստի գոյությունն ու անգոյությունը ծնում են մեկը մյուսին: Դժվարից բխում է հեշտը և ընդհակառակը, երկարից պատկերացում են կազմում կարճի մասին, և կարճից ընկալում են երկարը, բարձրն ու ցածրն ընկալվում են միմյանց հակադրությունից, երաժշտական հնչյունները ներդաշնակության են հասնում հարաբերելով միմյանց, իսկ նախորդն ու հաջորդը գաղափար են տալիս հերթականության մասին:

Ահա թե ինչու իմաստունն իր գործն անում է առանց գործողության, ահա թե ինչու իմաստունն իր ասելիքն արտահայտում է առանց խոսքերի:

Տեսանելի դառնալու համար ամեն ինչ վեր է խոյանում, և չկա մի բան, որն աշխարհին հայտնվելու համար սեղմվի կամ փոքրանա:

Շնված ամեն ինչն աճում է, և աճը տեր չունի: Ամեն
գոյ շարժվում է գոյության իր ընթացքով, և
գոյությունը ինքնին ոչ մի ակնկալիք չունի:

Գործն ավարտվում է, բայց ոչինչ չի վերջանում,
քանզի ամեն ինչի վերջը ամեն ինչի սկիզբն է:

Տաղ 3

Եթե մարդիկ իմաստուններով ու հմուտներով
չհիանան, մարդկանց միջև մրցակցություն չի լինի:
Եթե մարդիկ բարձր չգնահատեն զարդերն ու
հազվագյուտ իրերը, գող ու ավազակ չի լինի: Եթե
մարդիկ ցանկություն ու նախանձ հրահրող բաներ
չտեսնեն, նրանց ոգին ու միտքը չեն խռովվի:

Ուստի երկրի իմաստուն տիրակալը ազատում է
մարդկանց ուղեղներն ավելորդ մտքերից և լցնում
նրանց ստամոքսները, թուլացնում է կամքը և
ամրացնում ոսկորները:

Նա ձգտում է այնպես անել, որ ժողովուրդը խարդախ
իմաստություն ու կրքեր չունենա, իսկ նրանք, ովքեր
ունեն, ձեռնպահ մնան գործելուց:

Քանզի, երբ չկա գործողություն, համընդհանուր
կարգուկանոն է տիրում:

Տաղ 4

Ուղին (Դառն) դատարկ է, և անսպառ են
դատարկության դրսևորումները:

Այնքան անընկալելի խորն է այն, որքան կարող է
լինել միայն համայն գոյության ակունքը:

Եթե հարթես սուր անկյուններդ, քանդես խճճված
հանգույցներդ, մեղմես պայծառությունդ ու դառնաս
մյուսների պես անկարևոր ու աննկատ, կտեսնես
Ուղու գերագույն հանգստությունը և անդրդվելի
հանդարտությունը՝ անսահմանության նման վեհ ու
ինքնաբուխ:

Ես չգիտեմ, թե ինչից է այն ծնունդ առել:

Գուցե այն եղել է նույնիսկ ակունքից առաջ:

Տաղ 5

Երկինքն ու երկիրը չեն առաջնորդվում բարին
գործելու ցանկությամբ, նրանք ամեն ինչ թողնում են
գոյության ինքնահոսին: Իմաստունները չեն գործում
բարին անելու ցանկությամբ, նրանք թողնում են, որ
մարդիկ ապրեն սեփական հայեցողությամբ:

Մի՞թե երկնքի ու երկրի միջև եղած տարածությունը
նման չէ դարբնոցի փուքսի: Երբ օղբ դուրս է մղվում,
փուքսն իր ուժը չի կորցնում, այլ կրկին շարժման մեջ
մտնելով, ավելի շատ օղ է փչում:

Ուստի շատ խոսելուց մարդ շուտ է հոգնում:

Ամբողջական պահիր ներքին ուժդ և կենտրոնից
առաջ մղիր՝ դարբնոցի փուքսից ելնող օղի նման:

Տաղ 6

Խորքի (Յին) ոգին չի մեռնում, միշտ նույնն է մնում,
ուստի իզական սկիզբ ենք կոչում դա:

Նրա դարպասներից է ծնվել համայն աշխարհը, և դա
այն ակունքն է, որտեղից ելել են երկինքն ու երկիրը:

Յանդարտ ու ամբողջական է նրա ուժը:

Այդ ուժը քնքուշ է ու անսպառ:

Տաղ 7

Երկինքն ու երկիրը հարատւ են, քանզի երկինքն ու երկիրն իրենց համար չեն ապրում, և դա է նրանց հարատւութեան գաղտնիքը:

Ուստի իմաստունն իր սեփական անձը վերջում է դնում, բայց հայտնվում է առջևում: Նա չի կառչում իր «ես»-ից և իր անձին դիտում է ինչպես մի անձանոթի, որն ապրում է անկախ իրենից, քանի որ նա սեփական նպատակներ չունի, և ազատ է բոլոր անձնական ցանկություններից:

Տաղ 8

Բարձրագույն կատարելությունը ջրի նման է:

Ջուրը կատարյալ է, քանզի այն ծառայում է բոլոր էակներին, և հասնում է ամենուր: Ջուրը հասնում է այնքան հեռու և այնքան խորը, որտեղ մարդիկ չեն կարող և խուսափում են հասնել:

Ուստի ջրի ուղին նման է բնական Ուղուն (Դաոյին):

Բնակարանի կատարելությունը նրա հարմարավետության մեջ է, ճիշտ այնպես, ինչպես մտքի կատարելությունը հանդարտության մեջ է, հարաբերությունների կատարելությունը դրանց առաքինության մեջ է, կառավարության կատարելությունը կայուն կարգուկանոն ապահովելու մեջ է, գործի կատարելությունը հմտության մեջ է, իսկ ցանկացած շարժման կատարելությունը կախված է ճիշտ ժամանակին այն կատարելուց:

Ուստի, երբ որևէ գործում կատարելության հասած մեկը չի բողոքում իր ցածր դիրքից, ոչ ոք չի կարող երբևէ մեղադրել նրան որևէ սխալի մեջ, որովհետև նա իր ցածր դիրքում չի վիճում, ուստի երբեք չի սխալվում:

Տաղ 9

Երբ անոթը լի է, այն այլևս անհնար է պահել:

Ուստի տեղաշարժելու համար անոթը պետք է դատարկել:

Եթե անդադար փորձես թրի սրությունը, այն դեռ չօգտագործած կբթանա:

Երբ մարդու տունը լի է ոսկով ու թանկարժեք քարերով, տանտերը չի կարող երկար պահպանել դրանք:

Երբ հարստությունը և փառքը գոռոզամտություն են ծնում, կարող են փորձանք դառնալ մարդու գլխին:

Երբ գործն ավարտված է, և գալիս է փառքը, ժամանակն է հեռանալ:

Դա է երկնային Ուղին:

Տաղ 10

Երբ հոգևորն ու մարմնականը միասնության մեջ են,
դժվար է հոգին պառակտել մարմնից:

Երբ մարդը՝ ներդաշնակեցնելով իր շնչառությունը,
հասցնում է այն մեղմության գերագույն աստիճանի,
կարող է մանկան պես հանդարտ ու մաքուր դառնալ:

Երբ մարդն իր մտքից մաքրում է բոլոր կասկածներն
ու երևակայած բաները, ընկալում է իր հնարավոր
սխալները:

Մի՞թե հնարավոր է սիրել ժողովրդին և պետություն
կառավարել՝ չունենալով որևէ նպատակ:

Մի՞թե հնարավոր է ցանկալի գավակ ծնել ու չլինել
հոգատար ու անձնուրաց:

Մի՞թե հնարավոր է հասնել ուրիշների համար
անընկալելի իմաստության բարձունքների և
չունենալ իմաստունի համբավ:

Ուղին (Դաոն) է ստեղծում բոլոր գոյերին և սնում
նրանց:

Ուղին է ծնունդ բոլոր գոյերին և չի հավակնում լինել
դրանց տերը: Ուղին է անում ամեն ինչ, բայց չի
պարծենում իր արածով:

Ուղին է նախորդում ամեն ինչին, բայց չի
վերահսկում ոչինչ: Դա է Ուղու գերագույն
հատկությունը:

Տաղ 11

Երեսուն ճաղ միանալով անիվ են կազմում, բայց
ճաղերի միացման կետում առանցքի անցքն է
հնարավոր դարձնում անվի գործածումը:

Կավը ձևավորելով անոթներ են ստեղծում, բայց
անոթի գործածումը կախված է դրա
դատարկությունից:

Պատերի մեջ դուռ ու լուսամուտ են կտրում
բնակարան ստեղծելու համար, բայց բնակարանի
գործածումը կախված է ներսում եղած դատարկ
տարածությունից:

Ուստի գոյությունն օգտակար է, բայց անգոյությունն
է այն գործածելի դարձնում, իսկ դատարկ տեղը
կարող է անսահման կիրառումներ ունենալ:

Տաղ 12

Յինգ գույներից մարդու տեսողությունը մթագնում է:

Յինգ հնչյուններից մարդու լսողությունը խլանում է:

Յինգ համերից մարդու քիմքն անզգայանում է:

Արագընթաց շարժումն ու որսը մաշում են մարդու սիրտն ու պղտորում միտքը: Թանկարժեք ու հազվագյուտ իրերը չարության ու հանցանքի են դրդում մարդուն:

Ուստի իմաստունը հագեցնում է ստամոքսի կարիքը և հրաժարվում աչքի ցանկությունից: